

ARIE


ԵԳԻՊՏՈՍ

Տարեկ. 50 ռ.
Վեցամս 25 "

ԱՐՏԱՍԱՀՄՆ
Տարեկ. 13 ֆր
Վեցամս. 7 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք ետ
չեն տրուիր

Կանոնադրումներ
մասնաւոր պայ
մաններով:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ԶԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄ. 19 ՀԻՆԳՇԱՐԹԻ 1903

ԹԻԻ 282

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓՏԱԽՏԸ

Կարգացէք որ հայերէն թերթը որ կ'ուզէք, մտիկ ըրէք որ դասակարգին պատկանողը որ կ'ուզէք, պիտի տեսնէք թէ մեծագոյն տեղը կուտան իրենց գրութեանց և խօսակցութեանց մէջ ըսի-ըսաւաբանութեան. Ուշագիր եղէք ինչ ախորժով ու համառութեամբ կը խօսին ու մտիկ կընեն սոյն օրինակ անհամ, անլի ու անօգուտ խօսքերը որոնց միակ նպատակն է այս ու այն վար զարնել, այս ու այն անուանարկել, ժամերով ու ժամերով կը խօսին ու կ'ունենան այս զրաբանութիւնները. «ըսի որ... ըսաւ թէ... այսինչը գէշ է, այնինչը էշ է, միւսը խենթ է»։ Դարձուցէք, փորձի համար, խօսքը օգտակար նիւթի մը վրայ, և ահա պիտի տեսնէք որ իսկոյն լարուած ու տնկուած ականջները պիտի սմբին և զուարթ գէտքերը պիտի ծամածռին, և մի առ մի լուծուին ու ցրուիլ պիտի տեսնէք այդ ոգեւորեալ ակումբին։ Ահա թէ ո՛ւր ենք։

Ոչ մէկ առիթով այնքան ի յայտ կուգայ դըլուխներու պարապութիւնը որքան այս առիթով Հանդէպ ըսի-ըսաւաբանութեան և դատարկաբանութեան, դողցես չկայ բաժանում ու տարբերութիւն մեր գասակարգերուն մէջ, ոչ սուսեալ, ոչ անուս, ոչ ռամիկ, ոչ ապնուական, ոչ մեծ ոչ պզտիկ։ Այստեղ, միմիայն այստեղ հա-

ւասարութիւնը կատարեալ է։ Նոյն իսկ եկեղեցւոյ մէջ չեն ընդունիր հաւասարութիւնը, բայց այս կէտին մէջ տմենքը կը խոստովանին ու կը դաւանին զայն։

Ժողովուրդի մը բարոյական մեռելութիւնը և մտաւորական ամուլութիւնը ասկէ աւելի բացառաւոր չենար եղել։ Ինչի՞ կը ծառայեն դպրոցները, մամուլն ու գրականութիւնը, ինչի՞ այս բազմաթիւ հրատարակութիւնները։ Այնքան չեն խօսած ու լսած աւելի բարձր ու օգտակար նիւթերու վրայ, այնքան աւուր հացի տեղ բռնած են զրախօսութիւնները, այնքան չեն վիճած ու վիճաբանած բարձր նիւթերու վրայ, որ իբր հեռեանք այսօր կարծիքի տարբերութիւնը գըրեթէ գոյութիւն չունի մեր մէջ, բան մը որ ծանծաղամիտներու տեսակէտով լաւ նշան մըն է, մինչդեռ իրապէս ժողովուրդի մը բարոյական մեռելութեան ապացոյցն է։

Ենթագրեցէք թէ բոլոր մարդիկ միեւնոյն տեսութիւնն ու գաղափարը ունենային ամեն խնդրոյ մէջ և գաղափարի ու գաղափարութեան տարբերութիւնը գոյութիւն չունենար, ի՞նչ պիտի ըլլար աշխարհ, միթէ նախնական կամ վայրենի վիճակէն ու է չեղում և յառաջդիմութիւն կարելի պիտի ըլլար։ Ի՞նչ ըսելու է ուրեմն բոլոր անոնց կատարած դերին որոնք կը ջանան իրենց խանձորուրին մէջ խեղդել բոլոր այն պաղափարներն ու սկզբունքները որ չեն համաձայնիր ընդհանուր կարծիքին, երբ ամեն մէկը վա-

րակուած է այն հիւանդ ըմբռնումով թէ պէտք չէ ժողովրդական գաղափարներու հակառակ կարծիք յայտնել, ի հարկէ ուրիշ բան չը մնար ընել մեղ, բայց եթէ ընկերութեանց և հաւաքումներու մէջ կամ ծունկ չօքել և շախմատի իրաւունքի պէս միեւնոյն բանաձեւը միաբերան արտասանել, և կամ բոլորովին զրաբանութեամբ շաղակրատել:

Ս. ՄՈՒՐՍԵԱՆ

ԱՉԳԱՅԻՔ

Տխրութեամբ կը ծանուցանենք թէ՛ Վսեմ, Կարապետ Պէյ Րէիզեան այսօր ժամը 3ին իւր բնակարանին մէջ յանկարծամահ եղած է սրաի հիւանդութենէ:

Յուդարկաւորութեան տխուր հանդէսը պիտի կատարուի շաբաթ օրը և մարմինը պիտի ամփոփուի Րէիզեան գերդաստանի յատուկ քրտմաբանին մէջ:

Եկեղեցապատկան կալուածոց յափշտակութեան առթիւ Պարսկահայք ալ երկար հեռագիր մը քաշելով ուղղակի Ձարին, իստիւ բողոքած ու պահանջած են որ Հայութեան ընդհանուրին պատկանող կալուածները վերադարձուին Հայաստանի եկեղեցւոյ:

—Ուսաստանէ կիմացեն թէ՛ Նախիջևանցի Յովհաննէս Աճէմեան, իւր ամբողջ հարստութիւնը՝ 100-120 հազար ռուպլի՝ յանուն Կ. Պոլսոյ Պաշարարքարանին կտակեր է, պայմանաւ որ այդ դրամը Անգլիոյ պետական դրամատան մէջ պահուի, տոկոսը աղգային կրթութեան յաւկանայ, ու եթէ յարմար դատուի, որ և է կըրթական կամ բարեփրական հաստատութիւն մը բանալ, իւր անունով նշանակուի:

—Տեղւոյս «Ջէյթունի Բարեփրացի» Գործադիր ժողովոյ անդամ ընտրուած են.

Տեարք Տոբթ. Էնֆիյէճեան, Բարսեղ Օհան-

եան, Շաւարշ Հովիւեան, Սմբատ Բիւրատ և Մըկրտիչ Շատախցեան:

—Փրովիտէնսի (Ամերիկա) մէջ Բալույի Խօշմաթ գիւղէն Սարգիս Նիկողոսեան 22 տարեկան երիտասարդը, իր մօրեղբօր՝ Պետրոս Ուլուսեանի 610 տոլարը (120 ոսկի) յափշտակելու համար խեղդած է զայն՝ լաւ մը գինովցնելէ վերջ անոր կոկորդին վրայ նստելով: Իրեն օժանդակած է նաև նոյն գիւղէն Գասպար Նիկոյեանը որ փախած ըլլալուն Ամերիկեան ոստիկանութեան կողմէ կը փնտռուի. իսկ Սարգիս ձերբակալուեր ու ոճիրը խոստովաներ է:

—Վերջերս Լոնտոնի մէջ սպաննուող երկու հայերն են եղեր (Նաղարբեկեան հաստուածէն) Արամ Գրիգորեան և Տիգրան Իզմիրլեան: Երիտասարդ անգլիացի մը թէև անմիջապէս մարդասպանին վրայ յարձակելով ատրճանակը ձեռքէն առեր է, բայց ան չի ձերբակալուելու համար քովի ուրիշ ատրճանակով ինքզինքը սպաննուէ: Թէ՛ Սափունին և թէ՛ վերոյիշեալ երկու հայերը սպաննող այս մարդը՝ Եօրկի Եանքի անունով վաղեմի չարագործ մ'է եղեր:

Սագունիի բարեկամները բացէ ի բաց կը յայտարարեն եղեր թէ իրենց ձեռքով վրէժ պիտի լուծեն իրենց պետին սպաննումին համար:

—Սապահ-Գիւլեանը սպաննել փորձող Արապկիրցի Սամուէլ Կիւլէպեան, ամերիկեան դատարանին կողմէ դատապարտուեր է 9էն մինչև 12 տարի բանտարկութեան, Մասաչուսէթի նահանգային բանտին մէջ:

—Մաթէնի դրածին նայելով, Նաղարբեկեաններու Լոնտոնի կեդրոնատեղին ալ պոմպա մը զրկուեր է, բայց ժամանակին իմացուելով, ոստիկանութիւնը ձեռք անցուցեր է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Սուլթանին ծննդեան տարեդարձին օրը մինակ Գերմանիոյ դեսպանը անոր ներկայացած է միւս դեսպանները բացակայ գտնուած են:

—«Թան» կըսէ թէ Կաւկասիոյ կառավարիչ

կալիցիներ հրաժարեցուցուած է, որուն պիտի յաջորդէ եղեր պատերազմական նախարար զօրավար Բուրոբաթքին:

— Սուլթանը համբաւաւոր փուտաւ բաշայի երկու զաւակները Պաղտատ աքսորեր է:

— Իտալիոյ թագաւորն ու թագուհին նոյն 17ին հասած են անգլիա:

— Վիէնայէ կը գրեն թէ հակառակ Դրան մերժումներուն, Ռուսիա և աւստրիա զործադրել պիտի տան Մակեդոնիոյ բարենորոգման մասին իրենց ներկայացուցած ծրագիրը:

— Բեզրասպուրկէ կը հեռագրեն թէ Ռուս զօրքերու ջոկատ մը Մանչուրիոյ մէջ Մուքտէնը գրաւեր է. իբր թէ հոն տիրող գրգռութեան ու Ձինական իշխանութեան տկարութեանը պատճառաւ:

— Փրանսիի նախարարապետը ծերակոյտին ծանուցեր է թէ ներկայ շրջանին մէջ նոր օրէնք մը պիտի առաջարկէ քուէարկելու համար, այդ օրէնքն է արգիլել կրօնական ընկերութեանց տըղաքներ դաստիարակելը, ինչ ձևի տակ ալ ըլլայ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

Երուանդ Օտեան կամ Երօտ, խմբագիր նախկին Ազաս Խօսք ամսաթերթին ու Ազաս Բեւի ներկայ շաբաթաթերթին, և Ազաս Գրիշ կամ Ազաս Բրիշ ապագայ հիմնելիք թերթին: Ազատ բառէն շատ կ'ախորժի, թէ և գրամին գերութենէն մեղի պէս աղատած չունի. թէ և «գործի մարդ» չէ, բայց ասիկայ պատճառ մը չէ որ մերթ ընդ մերթ «Սահմանադրութեան նոր բարե» մը չի տայ... երևոյթը փրկելու համար:

Սխալ մը գործած է կարծեմ, Ազաս Խօսքը Ազաս Բեւի վերածելով: Ազատ խօսք շատ լսած ենք, բայց ազատ բեմ տեսած չենք, որովհետեւ ամեն բեմ կուսակցութեան մը կամ քառօթի մը կը ծառայէ. Ազաս Խօսքի Օտեանը ո՛ր, Ազաս Բեւի Օտեանը ո՛ր:

Թէ և հասակը բարձր է, բայց մեր գրական աշխարհին Ձաքէօսն է, կրնայ ըսուիլ համարձակ. Ահա՛ գրող մը որուն մէջը նենգութիւն չը-

կայ. Օտեան վեհանձն ալ է, եթէ տեսնէ որ մէկը թերթ մը կը հիմնէ, իր բաժանորդաց ցանկը անոր տրամագրութեան աակ կը դնէ, ինքնաբերաբար, առաջարկելով որ անոնց ալ թերթ ղրկէ ու գործը գիւրացնէ. բան մը որ չեմ կարծեր թէ իր պաշտօնակիցները ըրած ըլլան իրարու:

Քալուածքը անհոգ մարդու մը քալուածքն է. Գրպանը կուտ չի կայ, կըսեն, բայց գլխաւը ըլլալու է. Դէմքին վրայ տեսակ մը զղջումի արտայայտութիւն կայ երբեք, կարծես մտքէն կ'ըսէ, «ինչո՞ւ ըրի պէ՛...» բայց և այնպէս մարդու բան մը ըրած չէ, ստոյգ է որ ծանկիւլեանին ապտակ մը զարկած է, բայց անիկայ ալ քաքա եղած է ուրիշի մը ընդունած մէկ հարուածով: Ինչ է պատճառը ուրեմն իր զղջումին, ամեն պարագայի տակ Ազաս Խօսքը, Ազաս Բեւի վերածելուն համար ըլլալու է, եթէ այս ալ չէ, ուրեմն ծնած ըլլալուն համար զղջացած է:

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ



Շաբաթական Հանրէս

Գրական, Գիտական եւ Մանկավարժական

Խմբագիր—Տնօրէն

ՄԻՀՐԱՆ ԱՅԻՄԱՆԱՉ

Ճոխ և հրահանգիչ պարունակութեամբը արտասահմանի համար իր տեսակին մէջ առաջինը եղող սոյն մանկավարժական գեղատիպ հանդէսը կուգայ մեծ պակաս մը լրացնել:

Ի սրտէ յաջողութիւն մալթելով մեր նոր պաշտօնակցին՝ ծիար Աօքանաղի, ջերմապէս կը յանձարարենք սոյն պատուական հանդէսը որդեսէր հայրերուն որ բաժանորդագրուելով, իրենց զաւկները այս կրթական «Պարտէզ» չի զրկեն:

Բաժնեկիւնն է Եգիպտոսի համար տարեկան 60 դրշ. արտասահման 16 ֆր. կամ 6.5 րուպի կամ 3 տուար:

Հասցէն է. — Խմբագրութիւն «Պարտէզ»ի, Աղեքսանդրիա (Եգիպտոս) Պաղոս-Ռամլէ:

ՎԵՐՋՆԱԾԻԱՐԿ

Հոկտեմբեր 31 (Ը.Ե.) շաբաթ օր նմանը չտեսնուած երևոյթ մը տեղի ունեցաւ զրեթէ աշխարհի ամէն կողմը. հեռագրական թելերը, 5-6 ժամի չափ յանկարծ դադարեցան գործելէ, յետոյ վերստին սկսան գործել: Այս երևոյթին պատճառը անբացատմելի մնացած է և այս մասին գիտունները զանազան կարծիքներ կը յայտնեն առանց կարենալ որոշ բան մը ըսելու:

Շատերը կարծիք կը յայտնեն թէ արեւին մէջ իրարանցում մը տեղի կունենայ և անոր ազդեցութիւնն է որ զգալի կըլլայ երկրագնդիս երկքորական թելերուն վրայ: Եւ իրաւ ալ աստղագէտները գիտեր են որ վերջերս արեւին երեսը հրեղէն տհաճին կամար մը ձևացեր է 945,000 քիլոմետր երկայնութեամբ: Յատակադէն մինչև կամարին բարձրագոյն կէտը 35,000 քիլոմետր է եղեր, այնպէս որ այդ կամարին բացուածքէն մեր աշխարհին մեծութեամբ քսաներկու գունտ հանգիստ կանցնին եղեր:

Այդ կամարը երեւնալէն քանի մը օր ետքը ահագին հրաբուխ մը երեցեր է արեւուն մէջ որուն արձակած բոցերը մինչև 115,000 քիլոմետր բարձրացեր են:

Արեւը այս միջոցին ծանր հիւանդութիւն մը կ'անցնէ. ահա՛ ճշմարտութիւնը:

Ծանօթ աստղագէտ Քամիլյ Փլամարիօն արեւուն այդ վիճակին կը վերագրէ հեռագրական թելերուն խանգարումը:

Պիրմինկամի դիտարանին տնօրէնն ալ գըրեթէ նոյն կարծիքը ունի և կըսէ թէ այս միջոցին արեւը անշոշափելի անհամար հիւլէներով կը ռմբակօծէ երկրագունտը: Այս հիւլէներն են որ առաջ կը բերեն կոր հիւսիսայեաներ, ինչպէս վերջերս երեցաւ Նիւ-Եորքի մէջ և տեւեց ժամերով, բոլոր երկնային կամարը կարմիր ներկելով: Այդ հիւլէները մարդոց վրան ալ անախորժ ազդեցութիւն մը կընեն, գլխի ցաւ պատճառելով:

Ուրիշ աստղագէտ մը՝ Ապէ Մօրօ կ'ըսէ թէ արեւը երկար ատեն այս վիճակին մէջ պիտի մընայ և տյդ միջոցին շատ խառնակութիւններ տես-

չի պիտի տեսնան աշխարհի երեսը. հին հրաբուխները պիտի բորբոքին, նմանը չտեսնուած ցուրտեր պիտի ընէ, մեծածած փոթորիկներ, և այլն:

—Որչափ ատեն պիտի տեւէ ասիկա, հարցուցած են Ապէ Մօրօյի:

—Տասներկու տարի, պատասխանած է աստղագէտը:

Վերջապէս արեւը հիւանդ է, ջերմ ունի եւ այս պատճառաւ մեր վրայ կ'արձակէ կրակէ զանգուածներ որոնք 900,000 քիլոմետր տեղ կերթան և ասիկա առաջ կը բերէ մթնոլորտային խառնակութիւններ, երկրաշարժ, հեղեղանման անձրևներ, գլխի ցաւ, եւն. եւ ասիկա ամբողջ տասներկու տարի պիտի տեւէ:

—Ու յետոյ...

—Յետոյ, պատասխանած է նոյն աստղագէտը, եթէ արեւը կարգի չմանայ, աւելի գէշ բաներ պիտի պատահին:

Ատենն է որ հոգինուս փրկութեանը մտածենք, վերջնաշխարհը մօտեցած կերեւայ:

ԷՔԼԻՌ

Եօթն մահացու մեղքերը. —Բան չի կայ որ չի ծաղրուի Բարիզի մէջ, եւ նոյն իսկ կրօնական բացատրութիւններ ու խորհուրդներ թատերաբեմի վրայ կը հանուին: Իր «պալէ»ներուն նոր հըրօպոյր մը աւելցնելու համար, Յօլի Պէռժէթ թատրոնը գիմեր է Ս. Գրոց, եւ հիմա իր ցուցանակին մէջ կը ծանուցանէ նոր պար մը «Եօթն մահացու մեղքեր» անունով: Այս մեղքերն են եղեր մէջ մէկ աղւոր աղջիկ, այն աղջիկներէն զոր կարելի է դրամով հանել թատերաբեմին վրայ՝ պարելու համար ամենէն տյլանդակ ֆէստիքով: Այս մասնաւոր պարն ալ ճիշտ եօթն աղջիկներ պիտի պարեն եղեր:

ՍՍ.ՐԳԻՍ ԹԱՇՃԵԱՆ

Կը ծանուցանէ արգոյ հասարակութեան թե երկարժամանակ յԱէնֆ Սիւկերի մեֆեմալի գործարանին մէջ աշխատած ըլլալով, հիմա եկած ու հաստատած է Եւրա Զապթիէի վրայ, Սուֆ-Էյ-Թապախիւն. եւ կը նորոգէ կարի ու կօշիկի մեֆեմալներ եւ ամէն տեսակ գործիքներ, խոստանալով գոհացնել իրեն դիմողները:

Ծ Ի Ծ Ա Ղ

Դատարանին մէջ.

Նախագահը. — Ինչո՞ւ զարկիր այս մարդուն.
Ամբաստանեալը. — Ի՛նչ քնեմ, վիճաբանե-
ցանք խօսք չհասկնար կոր, ապուշին մէկն է.
Նախագահը. — Տղաս, ապուշներն ալ ինձի
ու քեզի պէս մարդիկ են.

Հացագործի քեզկեանհար մը ստիպուած էր
փռան յաճախորդներէն մէկու գէժ դատ բանալ,
անկէ դանձելու համար 160 դահեկան առնե-
լիքը.

Դատաւորը կը հարցնէ պարտապանին. —
Դուք 160 դահեկան պարտք ունիք եղեր աս
մարդուն.

— Ինչի՞ փոխարէն.

— Առած հացերնուդ փոխարէն. ճիշդ է.

— Ամենևին չեմ կարծեր թէ ճիշդ եղած
ըլլայ.

Թէզկեահտարը. — Ճիշդ է տէր իմ, պատրաստ
եմ երգնուլ.

Պարտապանը. — Տէր նախագահ, եթէ երդ-
նու թէ ինձի տուած հացերուն կշառքները ա-
մենքն ալ ճիշդ էին, այն ատեն ես ալ պատրաստ
եմ վճարել ամբողջովին.

Դատաւորը. — (Թէզկեահտարին) ասոր ի՛նչ
պիտի ըսէք.

Թէզկեահ. — (մտածելէ վերջ) Պէտք է երթամ
վարպետիս հարցնեմ.

Փրանսացի մը, Աւստրիացի մը, Ռուս մը և
Թուրք մը իրարու հետ կը խօսակցէին.

— Մենք շատ մը տիւրքեր ունինք. կ'ըսէ Փր-
անսացին.

— Մենք ալ շատ մը արշիտիւքներ. կը պա-
տասխանէ աւստրիացին.

— Մենք ալ կռանտիւքներ. կ'ըսէ Ռուսը.

— Իսկ մենք՝ հէօտիւքներ. կ'աւելցնէ Թուրքը.

ԻՔԻ ԷՐՍԵՆԻԼԵՐ

(Տարպը մէսէլ)

Խաջօ աղբարչա գոմշուտ Ղազար՝
Մոհապպէթ իյէ եօշա չըգմարար,
Վէ սգշաւսաւսազ իյէրուշյուպ՝
Պիր ֆիւրս ֆեօյիւնէ վասըյ օյուրար.

Գարար վերիւրէր գօնազ իթմէյէ
Խյօ նաւ պիր soup ֆիւրսիւն էվիւնէ.
Մերգում՝ անյերի մա՛մեմնումիյէ
Այըպ կեօթիւրիւր sonրու էվիւնէ.

Պիր արա Խյօ՝ սօրար Ղազարա,
«Նասըյ աւսաւ սրը շու Խաջօ աղա».
Ղազար ճէվապէն, «Խյօ՝ հիյ սօրմա՛,
էշէկ սիր, էշէկ օ Խաջօ պապա».

Պասէհու Խյօ՝ Խաջօ աղբարա. —
«Նասըյ աւսաւ սրը շու Ղազար աղա».
«Ելզիւնէ պա՛զ պիր, ֆեօթէյէ պէնզեր».
Խաջօ եապաշնա Խյօյա սեօյէր.

Օշէն ֆիւրս Խյօ՝ պիր սեմէթ օրու՝
Խաջօ աղբարըն եօնիւնէ սրար.
Պիր գապ իյէ սէ ֆեմիֆ կեթիրիպ,
«Պու սա սէնիւն սիր, ա՛յ Ղազար աղբար».

Իֆի սրգաւաշ շաշըպ գալըրար,
Վէ սեպէպիւնի ֆիւրսէն սօրարար.
«Նէ՞ սիր է՛յ Խյօ, եազըշը՞ մը պու.
Պու կեօնա իգրամ պիզէ օյնը մու».

— «Այըպրամայըն ազիզ soupլարըմ,
Շահասէթ՝նիզի էվէշէն աշըմ.
Անյերէ կեօթէ քեսարիֆ իքսիւմ
Սիզէ եազըշան իշպու իգրամըմ».

Գըսէ. — Ասլա թատհիւպ իթմէմէլիյիզ
'կէր եապանճըտան կէօրսէք հագարէթ.
Ձիրա պիզ տայիմա պիրպիրիմիզին
Նատիմիլիինէ իտէրիզ կայրէթ.

Վ. Վ.

ԹԱՏՐՈՆ

Յառաջիկայ Շաբաթ գիշեր (նոյ. 21) տեղ-
ւոյս Բիրամիտի թատրոնին մէջ պիտի ներկայաց-
ուի՝ Արշակ Բ. ազգային ողբերգութիւնը 5 ա-
րարուած : Հեղինակութիւն անձան Պէշիկթաշը-
եանի :

Հայ նուագաժողովը խումբը միջնարարներուն
ընտիր կտորներ պիտի նուագէ :

Խաղին պիտի յովորդէ ծիծաղաշարժ կտտա-
կերգութիւն մը :

Երկու երեք շաբաթէ ի վեր կատարուած
փորձերէն կրնանք վստահիլ թէ խաղը կարելի
եղածին չափ փայլուն կերպով պիտի ներկայաց-
ուի ու հանգիկականք գոհ պիտի մնան :

Հայ թատերախումբը որ ամէն զոհողութիւն
յանձն առած է ներկայ ձմրան եղանակին մէջ
տեղւոյս Հայ հասարակութիւնը չ'զրկելու մերթ-
ընդ-մերթ թատերական երեկոյթներէ , իրա-
ւոնք ունի յուսալ թէ իր ջանքերը պիտի պակ-
ուին թատերասիրաց արգիւնաբեր ներկայու-
թեամբը , որմէ քաջալերուած՝ հետզհետէ պիտի
ներկայացնէ իր ռէպէտիուալը կազմող կարգ մը
քարոյշալից թատերախաղեր ու զուարճալի կատա-
կերգութիւններ :

Քաջալերենք որ վայելենք :

ՀԵՌԱԴԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Սուգ-էլ-Բեասէին

Տիկին Մէննու՝ իր 19 տարեկան երիտասարդ-
տղան սոթտել ուզող տիկին Կոկտակեանի ու ա-
նոր ազկանը սուրբուրդով վերջնադիր մը զրկեց
տեղական բոթի միջոցաւ :

Մանրամանութիւնք յաջորդ թուով :

Շաաբա Փաթուռա

Օդափոխութենէ վերադարձի առթիւ հերժա-
նեով հացկերոյթ մը տրուեցաւ ի նօքլէ : Չարսա-
խը ելաւ ելաւ նստաւ : շատ մը բաժակաճառեր ու
զաւաթաճառեր ձօնեալ առ համակրելեաց հա-
մակրելին : մինչեւ ետքը ճան-ճիէր խուզի-սարմա
սիական խօսակցութիւններ : ոգևորութիւնը ա-
մէն կողմ կը տիրէր ու մինչեւ առաւօտ պիտի
տեէր, եթէ սակայն «չունշանորդի լամպային կազմ-
չի հատնէր» :

Դիտող

ՏՊԱՐԱՆ

ՀԱՅԵԼԻ

«Հայեղի»ի սպարանին մէջ դիւրամասցելի գնով
կը սպագրուին առեւտրական տներու համար
ամեն յեղուէ՝ Բարիգեան վերջին դրութեամբ հե-
սափրաշարժ , պասկերապարդ եւ գունաւոր փոփ-
րիկ ազդարարութիւններ : կը սպագրուին նաեւ աշ-
ցեւոս , հասցեւորն , հարսանեկան հրաշրագիր ,
մահազդ , նամակագրոյի , պահարան , տնասկ . եւն .
Ուրիշ ֆաղափներէ եղած յանձնարարութիւն
ալ փութով կը կատարուին :

ՅԱԿՈԲ ԳԱՐԱԿԷՕԶԵՍՆ

Սուգ-էլ-Արքարին

Կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդաց քե-
իկ յայտ ուրիշ տարիներ , այս տարի եւս յաշկապէս
բերել տուած է Զինական , Հնդկական եւ Օէյրա-
նի ընտիր եւ հոստէս քէյեր , որոնց գործածութիւ-
նը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է :
Կը պաճատէ նաեւ մազի համար ընտիր ներ-
կեր ամեն գոյնէ : Դիւերը յարաւոր :

Հետեւեալ գիրքերը կը ծխաւորին Տիար Կա-
րապետ Աստուածատի ֆով : Շէրիֆ բաշա :

Փիլիկ Աղբոր Հարսնիք	որշ. ողջ " 1.5 "
Այիկէի Լեթայիւ , հայաստ եւ քրքաքառ գործաշիքներ	8 " "
Դրպանի Երագահան	50 սնդմ
Դագան Դօճա , գովէսի	20 փոյ
Մահմուդիքիւ Միսկեւաքի	20 "

ԱՇՈՏ ՓԱԼԱԵԱՆ

Տպագրական ամեն տեսակ գործերու կաշուա-
նիս , փորագրիչ , քէ տուախի եւ քէ պղինձի վրայ ,
կը պատրաստուին նաեւ զանազանական կնիք-
ներ՝ մեծադէ եւ փառլոն :

Աղեփասնորիս , ծրանփ փողոց քիւ 22